«ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԲՈՒՍԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ»

ԹԵՄԱ

ՀՀ կառավարության 22.01.2015թ. «Անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականությունը և դրա իրագործման ռազմավարությունն ու միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №45-Ա որոշումը:

Հիմնական հասկացությունները

Անտառ՝ անտառային կամ անտառապատման նպատակով հատկացված այլ հողերում ծառաթփային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազանության ու բնական միջավայրի բաղադրիչների փոխադարձորեն կապված և միմյանց վրա փոխազդող ամբողջություն, որի նվազագույն մակերեսը կազմում է 0,1 հեկտար, նվազագույն լայնությունը՝ 10 մետր, և որտեղ ծառերի սաղարթը ծածկում է տվյալ տարածքի առնվազն 30 տոկոսը, ինչպես նաև նախկինում անտառածածկ անտառային հողերի ոչ անտառածածկ տարածքները.

բուսածածկ տարածքներ՝ անտառային, հատուկ պահպանվող տարածքների, գյուղատնտեսական, բնակավայրերի և այլ նպատակային նշանակության հողերում աճող վայրի և (կամ) մշակովի բուսատեսակներով տարածք.

բուսածածկ տարածքների հրդեհների կառավարում՝ միջոցառումների համակարգ՝ ուղղված բուսածածկ տարածքների հրդեհների կանխատեսման, կանխարգելման, ժամանակին հայտնաբերման, մեկուսացման և մարման միջոցով հողերի նպատակային կառավարմանը, մարդկանց կյանքի, գույքի և այլ նյութական արժեքների անվտանգության ապահովմանը.

Անտառային հրդեհ՝ բնականորեն կամ արհեստականորեն առաջացած հրդեհ անտառում:

Հրդեհի արդյունքում անտառը կարող է կորցնել իր նշանակությունը, կարող են խիստ տուժել անտառային էկոհամակարգերը՝ բուսական և կենդանական աշխարհը: Անտառային հրդեհները բնորոշվում են կրակի արագ տարածմամբ, խիտ ծխով և ջերմության անջատումով՝ ընդգրկելով լայն մակերես:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԲՈՒՍԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄՆ ՈՒ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՆ ԵՆ՝

1. «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, (18.04.2001թ. ՀՕ-176 (11))
2. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (11.10.1994թ. ՀՕ-121 (12)),
3. «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (23.11.1999թ. ՀՕ-22 (7)),
4. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ. ՀՕ-211-Ն (4)) ,
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 589 որոշումը,
6. ՀՀ կառավարության 22.01.2015թ. «Անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականությունը և դրա իրագործման ռազմավարությունն ու միջոցառումների ցանկը հաստատելու մասին» №45-Ա որոշումը,
7. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 26-ի №1513 հրամանը «Հրդեհաշիջման աշխատանքների առանձնահատկությունները, հրդեհաշիջման և աշխատանքների իրականացման և հրդեհաշիջման աշխատանքների ժամանակ ստորաբաժանումների գործունեության կարգը սահմանելու մասին»,
8. Ներքին գործերի նախարարի 2024 թվականի մայիսի 15-ի թիվ 6-Ն և Շրջակա միջավայի նախարարի 2024 թվականի մայիսի 3-ի թիվ 156-Ն «ՀՀ ԱԻ նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի №6-Ն և ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 17-ի №409-Ն համատեղ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» համատեղ հրաման:

Դերերի բաշխում

Անտառածածկ տարածքները կազմում է ՀՀ տարածքի **11,2%-ը, մոտ 334,1 հազար հա,**

Աշխարհում տարեկան արձանագրվում են 200 հազարից ավելի անտառային հրդեհներ,

Ըստ համաշխարհային վիճակագրության, անտառային հրդեհների 4% ունի բնական պատճառներ (կայծակ, երաշտ), իսկ դեպքերի մնացած 96% դեպքում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեղավոր են մարդիկ: Հրդեհների առաջացման հիմնական պատճառը չորացած բույսերի մնացորդների այրումն է դաշտերում և արոտավայրերում, որտեղից չվերահսկվող կրակը տարածվում է մոտակայքում գտնվող անտառների վրա:

Թվարկված իրավական ակտերով սահմանված բուսածածկ և անտառածածկ տարածքների հրդեհների ռիսկի նվազեցման ոլորտում գործառույթներ իրականացնող լիազոր մարմիններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունը,
բ. իրենց գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ներքին գործերի նախարարությունը,, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,
գ. անտառի սեփականատերերը,
դ. անտառային տնտեսություն վարող անձինք,
ե. պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները,
զ. միջազգային և հասարակական կազմակերպությունները,
է. քաղաքացիները:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 817 - Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԸ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ, որոշման հավելվածի 130-րդ կետը՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ Հայաստանի Հանրապետությունում անտառային հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով:

2. Հաստատել աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան



Կ Ա Զ Մ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ, փրկարար ծառայության պետ (աշխատանքային խմբի ղեկավար)

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տնտեսական մասնմի ղեկավար

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տնտեսական մասնմի ղեկավար

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պետի տեղակալ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պետի տեղակալ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահ

«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն (համաձայնությամբ)

2

«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի խորհրդական

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետ

Հայաստանի Հանրապետության մարզպետների տեղակալներ (ըստ անհրաժեշտության)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2015 թվականի N 45-Ա

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐՈՒՄ, ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԲՈՒՍԱԾԱԾԿ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշման N 1 հավելվածի 26-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***՝

1. Հաստատել՝

1) անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականությունը և դրա իրագործման ռազմավարությունը՝համաձայն N 1 հավելվածի.

2) անտառային հողերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում և բնակավայրերում բուսածածկ տարածքների հրդեհների կառավարման ազգային քաղաքականության իրագործման միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ցանկով նախատեսված միջոցառումների իրականացումը՝դրանք ըստ տարիների քննարկելով և ընդգրկելով Հայաստանի Հանրապետության կառավարության միջոցառումների տարեկան ծրագրերում և գերակա խնդիրներում:

(2-րդ կետը փոփ. 12.09.19 N 1230-Ա)

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Հ. Աբրահամյան**

2015 թ. հունվարի 30
Երևան

Վիճակագրություն
2019-2024թթ. ՀՀ բուսաածածկ տարածքներում գրանցված հրդեհների վերաբերյալ

Մարզի անվանումը	2019թ.		2020թ.		2021թ.		2022թ.		2023թ.		2024թ.	
	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա
Արարատ	805	759,8	657	573,1	484	907,5	315	217,8	271	186,2	148	232,2
Արագածոտն	513	1629,4	330	542	213	177,6	168	171,2	134	208,0	369	153,5
Արմավիր	556	926,84	377	476,8	202	284,19	77	271,9	115	96,1	140	129,9
Գեղարքունիք	98	265,6	60	91,31	118	301,41	226	2134,4	86	256,8	85	749,8
Լոռի	459	4590,1	251	945,3	158	484,81	265	1276,7	292	1005,8	196	736,6
Կոտայք	1264	3794,2	532	466,8	670	847,29	766	1799,8	519	560,4	336	207,8
Շիրակ	235	2495,7	75	230,6	164	384,5	156	942,1	174	372,1	123	220,0
Սյունիք	378	1470,6	214	424	245	950,34	282	893,8	235	516,0	159	270,8
Վայոց ձոր	170	432,93	122	281,6	87	296,43	98	45,5	82	193,8	77	62,0
Տավուշ	414	1341,5	218	356,7	195	758,11	269	1053,9	155	275,6	155	138,9
Երևան	2536	1388	1340	663,9	1203	494,8	462	61,4	334	44,4	405	54,6
Ընդամենը	7428	19094,7	4176	5052,1	3739	5887	3084	8868,5	2397	3715,2	2193	2956,1



Վիճակագրություն
2019-2024թթ. ՀՀ անտառային տարածքներում գրանցված հրդեհների վերաբերյալ

Մարզի անվանումը	2019թ.		2020թ.		2021թ.		2022թ.		2023թ.		2024թ.	
	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա	Քանակը	Այրված մակերեսը, հա
Արարատ	0	0	1	5	2	0	2	0,3	0	0	1	0
Արագածոտն	1	0,3	0	0	0	0	0	0	0	0	1	0,5
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	2	0	0	0	0	0	0	0	0	0	2	3,2
Լոռի	20	341	2	0	8	7,8	4	153	1	4	1	1,5
Կոտայք	0	0	3	0	1	3,5	1	3	4	4,3	3	6,2
Շիրակ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Սյունիք	11	333	2	7,5	1	0	1	0	2	7	0	0
Վայոց ձոր	5	23	2	0,7	1	0	3	2,7	0	0	2	0
Տավուշ	21	28,7	20	152	6	1,5	7	49,1	15	48,6	3	1,6
Ընդամենը	60	725,1	30	164,8	19	12.8	18	208,1	22	63,9	13	13



Վիճակագրություն
2024-2025թթ. 1-ին կիսամյակում ՀՀ անտառային, բուսածածկ տարածքներում գրանցված հրդեհների վերաբերյալ

*2024-2025թթ. **առաջին կիսամյակի** ընթացքում ՀՀ **բուսածածկ և խոտածածկ** տարածքներում գրանցված հրդեհներ*

Մարզը	2025թ.		2024թ.		2024- 2025թթ. համեմատական	
	քանակը	մակերեսը, հա	քանակը	մակերեսը, հա	Աճի/ նվազման ցուցանիշ	%-ային (անգամ)
Արագածոտն	129	68.8	52	51.9	+77	2.5 անգամ
Արարատ	386	337.6	192	158.1	+194	2 անգամ
Արմավիր	124	56.2	48	36.9	+76	2.6 անգամ
Գեղարքունիք	93	167.0	16	21.6	+77	5.8 անգամ
Լոռի	301	1988.2	109	471.7	+192	2.8 անգամ
Կոտայք	223	150.1	64	17.0	+159	3.5 անգամ
Շիրակ	17	4.6	36	33.0	-19	-52.8
Սյունիք	199	534.5	59	18.0	+140	3.4 անգամ
Վայոց ձոր	68	49.4	20	4.4	+48	3.4 անգամ
Տավուշ	281	626.9	72	48.4	+209	3.9 անգամ
Երևան	275	53.9	119	12.7	+156	2.3 անգամ
Ընդամենը	**2096**	**4037.1**	**787**	**873.7**	**+1309**	**2.7 անգամ**

*2024-2025թթ. **առաջին կիսամյակի** ընթացքում ՀՀ **անտառային** հողերում գրանցված հրդեհներ*

Մարզը	2025թ.		2024թ.		2024- 2025թթ. համեմատական	
	քանակը	մակերեսը, հա	քանակը	մակերեսը, հա	Աճի/ նվազման ցուցանիշ	%-ային (անգամ)
Գեղարքունիք	2	13	2	3.2	0	-
Լոռի	4	16	0	0	+4	-
Կոտայք	0	0	2	1.15	-2	-
Սյունիք	3	27.8	0	0	+3	-
Տավուշ	11	52.5	1	0.1	+10	11 անգամ
Ընդամենը	**20**	**109.3**	**5**	**4.5**	**+15**	**4 անգամ**

Շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսությունների և հատուկ պահպանվող տարածքների ցանկը

1. Իջևանի անտառտնտեսություն
2. Նոյեմբերյանի անտառտնտեսություն
3. Արծվաբերդի անտառտնտեսություն
4. Սևքարի անտառտնտեսություն
5. Վայոց ձորի անտառտնտեսություն
6. Ճամբարակի անտառտնտեսություն
7. Գյումրիի անտառտնտեսություն
8. Սիսիանի անտառտնտեսություն
9. Կապանի անտառտնտեսություն
10. Սյունիքի անտառտնտեսություն
11. Վանաձորի անտառտնտեսություն
12. Թումանյանի անտառտնտեսություն
13. Ջիլիզայի անտառտնտեսություն
14. Ստեփանավանի անտառտնտեսություն
15. Տաշիրի անտառտնտեսություն

16. Հրազդանի անտառտնտեսություն
17. Արագածոտնի անտառտնտեսություն
18. Դիլիջան ազգային պարկ ՊՈԱԿ
19. Սևան ազգային պարկՊՈԱԿ
20. Արփի լիճ ազգային պարկ ՊՈԱԿ
21. Զիկատար պետական արգելավայր
22. Որդան կարմիր պետական արգելավայր
23. Հանքավանի ջրաբանական պետական արգելավայր
24. Բերդի Սորաններ դենդրոպարկ
25. Ստեփանավանի Սոճուտ դենդրոպարկ
26. Էրեբունի պետական արգելոց
27. Հրազդանի տեղամասի պահպանվող տարածք
28. Խոսրովի անտառ պետական արգելոց
29. Զանգեզուր կենսոլորտային համալիր ՊՈԱԿ
30. Ձրվեժ անտառպարկ

Անտառամերձ հրշեջ-փրկարարական ջոկատները

	Հրշեջ-փրկարարական ջոկատը
1	Կապան
2	Գորիս
3	Սիսիան
4	Եղեգնաձոր
5	Ջերմուկ
6	Վայք
7	Վեդի
8	Մարտունի
9	Գավառ
10	Վարդենիս
11	Ճամբարակ
12	Սևան
13	Իջևան
14	Դիլիջան
15	Նոյեմբերյան
16	Տաուշ
17	Աբովյան
18	Հրազդան
19	Ստեփանավան
20	Տաշիր
21	Թումանյան
22	Վանաձորի N1
23	Վանաձորի N2
24	Աշտարակ
25	Գյումրու N1
26	Գյումրու N2
27	Ամասիա

ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 6-Ն ԵՎ ՀՀ ՇՄ ՆԱԽԱՐԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 156-Ն ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
«Ա» Հունվար 2020թ. N 34Ա-Լ
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԱՇԽԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆՍՏՐԱՅՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
«29» Հունվար 2020թ. N 104-Լ
ք. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հրդեհային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 740-Լ, որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ, որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1.Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում առաջացած հրդեհներին արագ արձագանքելու և արդյունավետ հրդեհաշիջում իրականացնելու նպատակով հաստատել՝

1) անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 1-ի.

2) անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքների հրդեհների մարման, հրդեհավտանգության հսկողությանն ուղղված միջոցառումների և պարեկության կազմակերպման օրինակելի ձևը՝ համաձայն Հավելված N 2-ի.

3) անտառտնտեսության կամ բնության հատուկ պահպանվող տարածքի կառավարումն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից հրդեհաշիջում իրականացնող ստորաբաժանումների ցանկի օրինակելի ձևը՝ համաձայն

12.03.2020
ՏԵԼԻՊՈՍ ՑՈՒԼԱՅԱՆ
Подписано: TSOLAKYAN FELIKS 3701520046

Հրամանի նպատակը Հայաստանի Հանրապետության անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում առաջացած հրդեհներին արագ արձագանքման ու արդյունավետ հրդեհաշիջման կազմակերպումն է:

Հ/հ	Մարզ	Անտառտնտեսության ֆ բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը	Մերձակա բնակավայրերը	Բնակավայրը որտեղ անհրաժեշտ է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ	Նշումներ
1.	Արագածոտն	«Արագածոտնի անտառտնտեսություն» Երնջատափի, Արայի լեռան անտառապետություն	Երնջատափ, Եղիպատրուշ, Շողակն, Ձրամբար	Երնջատափ	
		«Արագածոտնի անտառտնտեսություն» Բյուրականի անտառապետություն	Բյուրական, Անտառուտ, Օրգով	Բյուրական	
2.	Վայոց ձոր	«Վայոց ձորի անտառտնտեսություն» Արտավանի անտառապետություն	Արտավան, Սարավան, Գոմք	Արտավան	
3.	Արարատ	«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ	ՈՒրցաձոր, Դաշտաքար, ք. Վեդի, Լուսաշող, Շաղափ, Գոռավան	Լուսաշող	
4.	Կոտայք	«Հրազդանի անտառտնտեսություն» Ծաղկաձորի անտառապետություն	ք. Ծաղկաձոր, ք. Հրազդան, Աղավնաձոր բնակավայր	ք. Ծաղկաձոր	

Հ/հ	Մարզ	Անտառտնտեսության յ բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը	Մերձակա բնակավայրերը	Բնակավայրը որտեղ անհրաժեշտ է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ	Նշումներ
5.	Սյունիք	«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ	Շիկահող, Ծավ, Սրաշեն, Ճակատեն, Շիշկերտ, Ներքին Հանդ	Ներքին Հանդ Շիկահող	
		«Կապանի անտառտնտեսություն»	Ագարակ, Ուժանիս, Խդրանց, Վարդավանք, Կաղնուտ, Արծվանիկ, Սևաքար, Չափնի	Եղվարդ Դավիթ Բեկ	
		«Սյունիքի անտառտնտեսություն»	Արավուս, Քարաշեն, Կոռնիձոր, Ներքին Խնձորեսկ, Խնձորեսկ, Տեղ, Հարթաշեն	Տեղ Կոռնիձոր Խնձորեսկ	
6.	Լոռի	«Թումանյանի և Ձլիզայի անտառտնտեսություններ»	Ախթալա, Շամլուղ, Ճոճկան, Մեծ Այրում, Քարկոփ, Շնող, Թեղուտ	Ախթալա	
		«Թումանյանի անտառտնտեսություն»	Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր	Թումանյան	
		«Տաշիրի անտառտնտեսություն»	Սարչապետ, Պրիվոլնոյե	Պրիվոլնոյե	

Հ/հ	Մարզ	Անտառտնտեսության ֆ բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը	Մերձակա բնակավայրերը	Բնակավայրը որտեղ անհրաժեշտ է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ	Նշումներ
7.	Տավուշ	«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ	Խաչարձան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ	Խաչարձան	
		«Նոյեմբերյանի անտառտնտեսություն»	Նոյեմբերյան, Բերդավան, Դովեղ, Ձուջևան, Բաղանիս, Ոսկեվան, Ոսկեպարի, Կոթի, Բարեկամավան, Կողբ, Զորական, Այրում, Արճիս, Լճկաձոր, Հաղթանակ, Պտղավան, Դեղձավան, Բագրատաշեն, Դեբեդավան	Պտղավան	
		«Արծվաբերդի անտառտնտեսություն»	Բերդ, Չինչին, Տավուշ, Ն.Կ. Աղբյուր, Վ.Կ. Աղբյուր, Նորաշեն, Մովսես, Չորաթան, Արծվաբերդ, Այգեձոր, Այգեպար, Չինարի, Նավուր, Իծաքար, Վ. Ծաղկավան, Վարագավան, Պառավաքար	Նավուր	

Հ/հ	Մարզ	Անտառտնտեսության ֆ բնության հատուկ պահպանվող տարածքի անվանումը	Մերձակա բնակավայրերը	Բնակավայրը որտեղ անհրաժեշտ է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետ	Նշումներ
8.	Շիրակ	«Գյումրիի անտառտնտեսություն»	ք. Գյումրի, Կապս, Բասեն, Հովիտ, Ամասիա, Մեծ, Սարիար, Ձաջուռ, Կրաշեն, Կամո, Լեռնագյուղ, Կրասար, Ձորաշեն, Բաշգյուղ, Մուսայելյան, Կաքավասար, Սարիար, Թորոսգյուղ, Սալուտ, Հառիճ, Պեմզաշեն, ք. Արթիկ, Սառնաղբյուր	Ձաջուռ Ձորաշեն	

Կամավորական շարժման զարգացման նպատակով ՀՀ ում գործող և առաջիկայում կամավորական հենակետերն են՝

Ցանկ

Հայաստանի Հանրապետությունում գործող և առաջիկա ստեղծվելիք կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի

Հ/Հ	Մարզ	Հենակետի գտնվելու		Սպասարկման բնակավայրեր
		Համայնք	Բնակավայր	
Գործող հենակետեր				
1	Արմավիր	Բաղրամյան	Երվանդաշատ	Երվանդաշատ, Բագարան
2	Կոտայք	Գառնի	Գառնի	Գառնի և Բանավան թաղ., Գողթ, Գեղարդ, Հացավան, Գեղադիր, Ողջաբերդ
3	Գեղարքունիք	Ճամբարակ	Արտանիշ	Արտանիշ, Շողակաթ, Աղբերք, Դրախտիկ, Ջիլ, Ծափաթաղ
4	Լոռի	Սպիտակ	Մեծ Պարնի	Մեծ Պարնի, Գեղասար, Խնկոյան, Լուսաղբյուր, Հարթագյուղ, Սարալանջ, Ծաղկաբեր, Շիրակամուտ, Կաթնաջուր
5	Վայոց ձոր	Արենի	Խաչիկ	Խաչիկ
6	Վայոց ձոր	Վայք	Մարտիրոս	Մարտիրոս, Սերս, Բարձրունի, Նոր Աշնաբերդ, Խնձորուտ, Ջառիթափ, Գոմք, Կապույտ
7	Տավուշ	Նոյեմբերյան	Պտղավան	Պտղավան, Հաղթանակ, Լճկաձոր, Արծիս, Այրում, Բագրատաշեն, Դեղձավան, Դեբեդավան
8	Սյունիք	Կապան	Շիկահող	Շիկահող, Սրաշեն, Ճակատեն
9	Կոտայք	Ծաղկաձոր	Մեղրաձոր	Մեղրաձոր, Փյունիկ, Մարմարիկ, Արտավաշ, Հանքավան, Աղավնաձոր
10	Սյունիք	Տեղ	Տեղ	Տեղ, Արավուս, Քարաշեն
Նոր ստեղծվող հենակետեր				
1	Արարատ	Վեդի	Լուսաշող	Լուսաշող, Լանջանիստ, Լանջառ, Վարդաշատ, Ջանգակատուն, Ուրցալանջ
2	Արագածոտն	Թալին	Արագածավան	Արագածավան, Արտենի, Գետափ, Թլիկ
3	Արագածոտն	Ապարան	Արագած	Արագած, Ծաղկաշեն, Շենավան, Հարթավան, Վարդենուտ, Արայի, Ափնա

Ջրաղբյուրները

Հ/հ	Ջրավազանի անվանումը	Խորություն (մ)	Մակերես (կմ²)	Երկարություն (կմ)	Լայնություն (կմ)	Ջրի ծավալը (մ³) փաստացի	Հեռավորությունը սահմանից (կմ)	Ուղղաթիռով ջուր վերցնելու հնարավորությունը այո/ոչ
	Երյան քաղաք							
1.	Երևանյան լիճ	8	0,44	0,92	0,74	4 772 000	-	
	Արագածոտնի մարզ							
2.	Ապարանի	44	8,7	6,15	0,37	49 340 000	50	
	Արարատի մարզ							
3.	Ազատի ջրամբար	72,4	2,85	1,67	0,24	62 060 000	15	
	Գեղարքունիքի մարզ							
4.	Սևանա լիճ	46,8	1260	70	50	329*10 8	5	
	Սյունիքի մարզ							
5.	Սպանդարյանի	36	11,315	5,9	1,1	111105 000		
6.	Տոլորսի	21	2,92	4,2	1,3	419500 00		
	Վայոց ձորի մարզ							
7.	Հեր-Հերի	36	0,68	2,1	0,2	11 680 000		
8.	Կեչուտի	20	1,291	1,7	0,6	19 080 000		
	Արագածոտնի մարզ							
9.	Կոշի	4	0,1	0,3	0,205	12 000	29	
10.	Ծիլքարի	10	0,18	0,78	0,38	750 000	38	
11.	Արագածի	9	0,004	0,09	0,07	500 000	49	
12.	Հովիտի	8	0,092	0,417	0,3	180 000	44	
13.	Ն.Սասնաշեն	29.20	0,06	0,34	0,15	380 000	29	
14.	Դավթաշեն	9.10	0,03	0,238	0,157	80 000	25	
15.	Վ.Սասնաշեն	4.80	0,033	0,237	0,163	20 000	29	
16.	Կաքավաձոր N 2	32.10	0,03	0,23	0,07	300 000	33	
17.	Վ.Բազմաբերդ	18.30	0,05	0,36	0,18	90 000	28	
18.	Դաշտադեմ	6.90	0,007	0,117	0,06	19 000	19	
19.	Հացաշեն	9.20	0,01	0.06	0.10	20 000	17	
	Լոռու մարզ							
	ծավանի ամբար	7-8	3,2	4,3	0,75	4 500 000	0 /Վրաստան	
	Կոտայքի մարզ							
	ջյուրակ ապարա)	4,5	1,142	1,6	0,7	3 000 000	55	
	ոմարիկ	12,3	1,572	3,94	1	20 240 000	62	
	Շիրակի մարզ							
	ինթաշի ամբար	15,5	0,942	2,4	0,63	4 600 000	38	
	ռնուտի ամբար	15	1,643	2,6	0,3	16 100 000	19	
	դաբարի ամբար	15,5	0,573	1,1	0,76	1 540 000	13	
	Սյունիքի մարզ							
	ահունջ ղրի գյոլ)	2,5	0,125	0,5	0,25	815 000	7,7	
	Տավուշի մարզ							
	Այգեձորի	40	0,078	0,674	0,117	3 600 000	6	



Անտառներում հրդեհների առաջացման հիմնական պատճառները՝

1. Մարդկային գործոնը,

2. Ամպրոպը (կայծակը),

3. Անտառային տարածքներով անցնող՝ էլեկտարահաղորդման օդային գծերի և դրանց անվտանգության գոտիների շահագործման կանոնների խախտումը,

4. Հակառակորդի կողմից կիրառված զենքից արձակված կրակը կամ արկը,

5. Չոր բուսականության և տորֆի ինքնաբռնկումը.

6. Անտառամերձ գյուղատնտեսական հողատարածքների հրկիզումները շոգ եղանակային պայմաններում, կամ առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանում:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Անտառային հրդեհների առաջացրած խնդիրների լուծումը կապված է մի շարք կազմակերպչական և տեխնիկական հարցերի և առաջին հերթին պլանավորված կարգով կատարվող հակահրդեհային և պրոֆիլակտիկ աշխատանքների հետ, որոնք ուղղված են անտառային հրդեհների առաջացման, տարածման և զարգացման զգուշացմանը:
2. Անտառային հրդեհների կանխարգելմանն ուղղված միջոցառումները ներառում են մի շարք անտառավարման աշխատանքներ (սանիտարական հատումներ, հատատեղային տարածքների մաքրում մնացորդներից, հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում և վերանորոգում, հանքայնացված շերտի կառուցում և խնամք, հրդեհային դիտակետերի կառուցում, ինչպես նաև հատուկ միջոցառումներ անտառում հակահրդեհային արգելքերի տարաբնույթ հակահրդեհային շինարարական օբյեկտներով):
3. Անհրաժեշտ է հիշել, որ անտառը դառնում է չայրվող, եթե այն մաքրեն չորուկից:

The equipment includes:

- Helmet
- Goggles / visor
- Fire retardant clothing
- Strong boots
- Gloves
- Water bottle

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- Անտառային հրդեհների դեմ պայքարում մեծ նշանակություն ունի ժամանակի գործոնը: Մինչև անտառային հրդեհի հայտնաբերումը և տեղայնացումը. անհրաժեշտ է ծախսել նվազագույն ժամանակ: Այնուհետև կարևոր առաջադրանք է հանդիսանում ուժերի և միջոցների պատրաստումը հրդեհաշիջման համար:
- Հրդեհաշիջման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների ուղղորդման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել հրդեհի տարածման հավանական արագությունը, ուժն ու հրդեհի վտանգավորության աստիճանը:
- Խոշոր հրդեհների մարման ժամանակ անհրաժեշտ է հնարավորինս արդյունավետ օգտագործել անտառում արդեն եղած արգելքներն ու գոտիները, ինչպես նաև հաշվի առնել շրջապատող տեղամասերի տարաբնույթ լեռնայնությունը, օպերատիվ կերպով տեղաբաշխել ուժերն ու միջոցները՝ առաջին հերթին կենտրոնացնելով դրանք ճիշտ ընտրված առանձնահատուկ դիրքերում, կտրելով կրակի ուղիները:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝









Անտառային և բուսածածկ տարածքների հրդեհների կանխատեսման, կանխարգելման և հրդեհաշիջման արդյունավետ կազմակերպման նպատակով առաջարկվում է՝

Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է աշխատանքներ տանել՝

1. Հեռավոր և սահմանմերձ բնակավայրերում կամավորական հրշեջ հենակետերի ստեղծման ուղղությամբ,
2. Շրջակա միջավայրի նախարարության (Էկոպարեկային ծառայություն), անտառտնտեսությունների և ՓԾ տարածքային համապատասխան ստորաբաժանումների փոխհամագործակցության պլանների մշակման ուղղությամբ,
3. Անտառտնտեսությունների արագ արձագանքման խմբերը զինելու և համապատասխան հանդերձանքով ապահովելու ուղղությամբ,
4. Անտառներին հարող տարածքներով անցնող գետերի, լճակների մոտ արհեստական ջրավազաններ կառուցելու՝ հրշեջ ավտոմեքենաները ջրով լիցքավորելու համար,
5. Անտառամերձ համայնքներում ստեղծված կամավորական խմբերի և անտառտնտեսությունների աշխատակիցների հետ վերապատրաստման դասընթացներ անցկացնելու ուղղությամբ,
6. Համայնքների, բնակավայրերի բնակչության շրջանում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ քարոզչության իրականացման և մարդաշատ վայրերում, անտառամերձ հանգստի գոտիներում, հուշաղբյուրներում և հրդեհավտանգ վայրերում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման համապատասխան ուղեցույց-նշանների տեղադրման ուղղությամբ,
7. Անտառամերձ, անտառամիջյան և դեպի ջրաղբյուրներ մոտեցման ճանապարհների անցանելիության ապահովման ուղղությամբ,
8. Անտառային հրդեհների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման թեմաներով ուսումնավարժություններ անցկացնելու՝ դրանցում ընդգրկելով շահագրգիռ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու կազմակերպություններին, ինչպես նաև բնակչությանը,
9. Անտառային հրդեհների վաղ ազդարարման համակարգերի ստեղծման ուղղությամբ՝ տիեզերական մշտադիտարկումը և օդային պարեկում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԳՆ փրկարար ծառայության կողմից հակահրդեհային միջոցառումներին ուղղված լայնածավալ հանրային իրազեկման աշխատանքների վերաբերյալ
(2025թ)

- ՀՀ ՆԳՆ ՓԾ տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալ, փ/ծ գեներալ-մայոր Կամո Ցուցուլյանի հանձնարարականի համաձայն՝ անտառներում և բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման, ինչպես նաև դրանց հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով **2025 թվականի հուլիսի 7-ի դրությամբ** ընդհանուր առմամբ իրազեկման աշխատանքներին ներգրավվել է **1566** փրկարարական ծառայող:
- Միջոցառումների շրջանակում ՆԳՆ ՓԾ Երևան քաղաքի և մարզային փրկարարական վարչությունների ենթակա ստորաբաժանումները **3700** օբյեկտներում, հանրային վայրերում և անտառամերձ տարածքներում բարձրախոսներով և անօդաչու թռչող սարքերի միջոցով (**22**) իրականացրել են իրազեկում, մարդաշատ վայրերում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ տարածվել և փակցվել է **6344** պաստառ և **2237** թռուցիկ:
- Միևնույն ժամանակ, հանրային հանգստի գոտիներում և անտառամերձ տարածքներում հնարավոր հրդեհներին արագ արձագանքելու նպատակով արդեն իսկ նախանշված վայրերում **148** մարտական հաշվարկ իրականացրել է հերթապահություն՝ հիմնականում ամենագնաց ավտոմեքենաների ներգրավմամբ:
- Անտառածածկ և բուսածածկ տարածքների **103** հատվածներում իրականացվել է հրդեհային իրավիճակի մշտադիտարկում, որին ներգրավվել է **276** փրկարար և **115** էկոպարեկ:
- Նշված աշխատանքների ընթացքում իրականացվել է տրանսպորտային միջոցների **627** ելք: